

## 11. ԿՍՄԱԹ

Կէլնի Արևելի թակավորում մեյ լաճ: Ուր լաճ խասեր ի, պիտի կարքյի:

Լաճ շատ երկիր կաճ կուգյա, որ տեղեն, որ կնիյ կուգի, կասեն.

- Քո կնիկ նոր ի մորեն իլե:

- Ո՞ր տեղն ի իմ կնիկ:

Կասեն. - Արևմտի թակավորի քյաղքյի նախրորթու աղչիյն ի:

Կուգյա ''ռուն: Կասի. - Հճյբեմ ոսկի լցեյչ, ես էրթմ զի խամար կնիկ պիրեմ:

Հայբա ոսկին կառնի, կէրթն: Ծատ, քիչ կէրթն, կխասնի Արևմտի թակավրու քյաղքյի մեչ:

Կխառցուցի. - Նախրորթու տուն ո՞ր տեղն ի:

Նշանց կուտան, կէլնի կէրթն իննց տուն:

Պնրև կուտա, պնրև կառնեն, կնստի:

Կասի. - Մայրի՛կ, կիշրվան տեղմ տյու զի:

- Պնրեով էկար, յաթաղ չունենքյ, աման տեղ կա:

- Ցաթաղ չկա, առ յլե ճանգմ ոսկի, տար յաթաղ պե:

Նախրորթ կննց յաթաղ իպե, էն կիշեր էնտեղ քնավ: Իննր միտքն էլ էն ի, որ իննց ախչիյն սպանի, որ չլնի ուր կսմնթ:

Նախրորթ ուր կնիկ կքյնեն, իննց աղչիկ ուրուրոցի մեչ, խոցմ խանե թիվլի տակ, կուլն ճն, չտատրե: Լաճ չկիտե, թե էն խոց ի խանե, ուր մեճնց խննչնլ կխանի, կզնի աղչկան, որ սպանի:

Խննչնլ, որ կզնի, տիպնի աղչկա խոցին, խոց կպլի: Էն կիտի աղչիկ մեռավ: Այրեմ ոսկի կտնի աղչկա ուրուրոցի տակ, զինքյ կթռնի կէրթն:

Նախրորթ ուր կնիկ կիշեր չըն ակխե, առատուն նոր կէլնեն վեր, կէրթնն թեխ ուրենց նախիր:

Աղչիկ իսկի չլն:

Կասի. - Աչնք էսա իմ աղչիկ մեռե:

Կէրթն ուր աղչիյն կխանի վեր: Կտիսնա աղչկա խոց պլե, աղչկա յարեն ոճաթե:

Իրիկուն իրիյ կուգյն, կնիկ կասի. - Մա՛րթ, մեր աղչկա յարեն պլե:

Կասի. - Կնի՛կ, կարելի ի, կիշեր էն մարթն ի պլյուցե, ղուքտոր էր, մենքյ չկիտցանքյ, - մարթ կասի, - կնի՛կ, էն մարթ, որ կնաց, իննր նշանակմ չի մնացե ըստն:

Կասի. - Մա՛րթ, ճայքեմ ոսկի թողե մեր տուն, կնձցե:

Մարթն ի նախրթութեն կթալի, կբնշլայի էն ոսկով քյեռշկ սարա կշինի ուր խամար կզանգյնանա: Աղճիկ կճեռճանա. կըլնի գեղեցիկ աղչիկ, ձըլձ թակավրու լաճ չփսակվեր ի:

Թակավրու լաճ շա կփոա ըստեխ, էնտեխ, էլմ էլ կուգյձ էն Արևմտքի քյաղաքյի նախրորթու տուն: Իտոր քյեռշկ սարի տակ կխասնի, սէրսուփ ավուզմ գյեռ, ինոր քյեռշկ սարի մոտ:

Աղչիկ նստե փենշձրի մեչ թձթ կանի, ինոր նմշի շառավըլք զձրկեր ի մեչ ճրին, լաճ կտիսնա, աչք որ կինի աղչկան, լաճու խելքյ կէրթձ: Կմնա վեր էդա ավուզին, մարթու մեյ կուգյձ կտիսնա, կակխցուցի լաճուն. կխանի վեր:

Կասի. - Հա՛յ տղա, քյե ի՞նչ էլձվ, տյու ընչի՞ ես ինգյե էտա տեղ:

Կասի. - Խալիվոր պապիկ, էսա քյեռշկ վի՞ր քյեռշկն ի:

Կասի. - Մեր թակավրու սեյիսի սարեն ի:

Կէլնի.էն տեղեն կտառնա կէրթձ ուր խոր, մոր մոտ:

Կասի. - Թակավոր ապրած, տյու պիտի էրթձս, Արևմտքի թակավրու աղչիյն ուզես զի խամար:

Կասի. - Որդի՛, էն մե գյեորձ չի, ալա որ տյու կուզես, ես պիտի էրթձմ ուզեմ, քյո ճասակն առիր: Աման ես չեմ կանա, տյու կնձ պե, ես քյե ճրաման տվեր եմ:

Թակավորն թձղձրիքյ կտիսնա, լաճն կէլնի կէրթձ:

Կէրթձ, կխասնի Արևմտքի քյաղաքյ, աղչիկ կուզի, կպիրի ուրենց խարսնիս կանեն: Տանեն էօղեն: Լաճ կուրախնա վեր ուր կնգյձն, ինչ ծեռ կուտա կնգյա ծծվեր, կտիսնա ինոր ծծի կող մեկ քյարիմ պես պձմ կա:

Կասի. - Աղչի՛կ, էսա ի՞նչ ի էսա տեղ:

Կասի. - Ես որ տղա ի, մարթմ կուգյձ մեր տուն, ճձյքեմ ոսկի կառնի կպիրի խետ, կիշեր կմնա մեր տուն, դուքտոր կլնի, իմ թևի տակ խոցմ կլնի, առանց իմ խոր-մոր ասելուն, խանչալ կզձրկի, իմ յարեն կպլցուցի: Իմ խեր-մեր չնիմնա:

Թակավրու լաճ էն գյձխ կասի. - Հե՛յ վախ, ախր իմ կսմձթ տյու էիր, ես եմ արե:

Նոր ինոնքյ կխասնեն ուրենց մուրազին:

